# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ և ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ (ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ) 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (gyumri@seua.am) | Ներկայացված հավելվածում առկա է վրիպակ, ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի բաժնում տեղադրված են 2019-2020 ուստարվա առաջարկը, մինչդեռ 2020-2021-ի համար ներկայացված է եղել նոր առաջարկ, մասնավորապես.<br>1. Հագուստի մոդելավորում կրթական ծրագիրը փոխարինված է Համակարգչային գրաֆիկա ԿԾ-ով<br>2. Հանված է Մեքենաշինություն և նյութերի մշակում կրթական ծրագիրը<br>3. Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա կրթական ծրագիրը փոխարինված է Էլեկտրոնիկա կրթական ծրագրով:<br>Առկա է Համալսարանի գիտական խորհրդի որոշումը, որը ներկայացվել է նախարարություն | Հարցը կքննարկվի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գիտական խորհրդի որոշումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնելուց հետո: Բուհի կողմից սահմանված ժամկետում ցանկը չներկայացնելու պատճառով նախարարությունը հիմք է ընդունել նախորդ տարվա ցանկը: | |